ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, Անկախ պետականության և քաղաքական հայագիտության ակունքներում, Ե., «Տիգրան Մեծ» հրատ., 2009, 680 էջ:



1960-ական թվականների կեսերին հայ ժողովրդի ազգային զարթոնքի պայմաններում, կապված Մեծ Եղեռնի 50-ամյա տարելիցի հետ, պատմագիտության ասպարեզում հուրհրաց Ջոն Կիրակոսյան երևույթը, որը հետագա զույգ տասնամյակներին խորհրդանշելու էր հայ հասարակական-քաղաքական մտքի առաջընթացը: Դրանով էր պայմանավորված այն հսկայական, աննախադեպ հետաքրքրությունը, որն առաջացավ մեր ժողովրդի ամենատարբեր շերտերում Ջ. Կիրակոսյանի՝ իրար հաջորդած հիմնարար աշխատությունների շուրջ: Դրանք դարձան ժողովրդական ամենալայն զանգվածների սեփականությունը, խոր արմատներ գցեցին, սնուցեցին մարդկանց ազգային մտածելակերպը, ճշգրտեցին շատ շատերի ազգային-քաղաքական դիրքորոշումը:

Պատկանելով պետական կուսակցական վերնախավին՝ Ջ. Կիրակոսյանը վտանգեց իր իսկ անձնական առաջընթացը, անվարան ձեռնոց նետեց մարքս-լենինյան գաղափարախոսության կարծրատիպերին ու կուսակցական նեղմտությանը և հաղթեց սեփական կյանքի գնով: Ցավոք, այդ յուրատեսակ հաղթահանդեսն ընդհատվեց 1985 թ. հունիսի 20-ին. 56 տարեկան հասակում նա վախճանվեց՝ անավարտ թողնելով բազում ծրագրեր ու մտահղացումներ:

Արժանավոր հոր ծննդյան 80-ամյակի առթիվ մի ինքնատիպ հուշակոթող կանգնեցրեց որդին՝ պատմական գիտությունների դոկտոր Արման Կիրոկոսյանը, որը հրատարակեց «Ջոն Կիրակոսյան. անկախ պետականության և քաղաքական հայագիտության ակունքներում» ստվարածավալ հատորը:

Գիրքը բացվում է Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանի՝ Ջ. Կիրակոսյանի 80-ամյակին նվիրված 2009 թ. մայիսի 5-ի ուղերձով, որտեղ գիտնականը բնութագրվում է իբրև հայ ժողովրդի արժանավոր զավակներից մեկը, ականավոր պետական, քաղաքական ու հասարակական գործիչ, պատմաբան ու դիվանագետ: Նշվում է, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման խնդիրը գիտականորեն հիմնավորեց և Հայաստանի արտաքին քաղաքական օրակարգում ընդգրկելու առաջին հաջողված փորձն արեց հենց Ջ. Կիրակոսյանը: Հանրապետության Նախագահի սրտառուչ խոսքի համաձայն՝ Ջ. Կիրակոսյանն իր ժողովրդի զինվորն էր, որն ուներ հրամանատարի պատրաստվածություն ու ռազմավարություն կերտողի հեռատեսություն: Նա իր ժողովրդի ծառան էր, ուներ տիրոջ գիտակցություն և սրտացավություն: Իր գործով նա դարձավ Հայաստանի նորագույն պատմության և դրանում ընթացող քաղաքական գործընթացների անքակտելի մաս: «Նման նվիրյալներով է ազգը՝ ազգ, երկիրը՝ երկիր»,- ամփոփում է իր խոսքը Հանրապետության Նախագահը:

Ժողովածուն Ա. Կիրակոսյանի տքնաջան պրպտումների արդյունքն է. այն ներառում է Ջ. Կիրակոսյանի գիտական ժառանգությանը նվիրված 200-ից ավելի նյութեր՝ գրախոսականներ, հոդվածներ, կարծիքներ, նամակներ, ելույթներ և այլ կարգի փաստաթղթեր, որոնք պատկանում են հայրենական և սփյուռքահայ պատմաբանների, գրողների, արվեստագետների, հասարակական-քաղաքական, կուսակցական-պետական գործիչների, շարքային քաղաքացիների գրչին: Դրանց մի մասը ժամանակին հրապարակվել է մամուլում, մյուս մասն էլ պահպանվել է պատմաբանի անձնական կամ Հայաստանի ազգային արխիվում և հրապարակվում է առաջին անգամ: Ուստի այդ առումով բացառիկ արժեք ու հետաքրքրություն են ներկայացնում:

Ջ. Կիրակոսյանի կենսագրականի և ընդարձակ առաջաբանի հեղինակն է Ա. Կիրակոսյանը: Ջարգացվում է այն միտքը, որ Ջ. Կիրակոսյանի գիտական և գիտահրապարակախոսական աշխատություններում հետևողականորեն ուրվագծվում են հայ ժողովրդի պատմությունից դասեր քաղելու, ազգային խնդիրների շուրջ համախմբվելու ու միասնականություն հանդես բերելու, ազգային արժեքները գնահատելու ու պահպանելու սկզբունքները, այսինքն՝ այն, ինչն այնքան անհրաժեշտ է մեզ նաև այսօր: Ուրվագծելով պատմաբանի հսկայական ջանքերը քաղաքական հայագիտության զարգացման բնագավառում, որին ըստ ամենայնի մասնակցություն է ունեցել նաև ինքը, Ա. Կիրակոսյանի կարծիքով այժմեական է նաև այդ խնդիրներով զբաղվող հաստատություն կամ հիմնադրամ ստեղծելը:

Ինչպես նշում է Ա. Կիրակոսյանը, բազմավաստակ պատմաբանը հայ ժողովրդի հետ կատարվածի համար ոչ միայն մեղադրում էր Աբդուլ Համիդ II-ի, երիտթուրքերի և քեմալականների որդեգրած հայաջինջ ծրագրերը և քննադատում մեծ տերությունների քաղաքականությունը, այլև մշտապես շեշտում էր արևմտահայության ազգային-ազատագրական պայքարի բացասական հանգամանքները, 1918-1920 թթ. իրատեսական և հավասարակշռված արտաքին քաղաքականություն որդեգրելու, Հայոց ցեղասպանության ճանաչման միասնական ծրագիր մշակելու, արևմտահայության իրավունքների կազմակերպություն ստեղծելու անհրաժեշտությունը:

Ժողովածուի առաջին 14 նյութերը վերաբերում են Ջ. Կիրակոսյանի «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916 թթ.» գրքին (1965 թ.): Դրանց թվում են պատմաբաններ Կարապետ Քարամյանի, Վանիկ Ղազանջյանի, Երվանդ Սարգսյանի, Արամայիս Մնացականյանի, Վարդգես Միքայելյանի, Մկրտիչ Ներսիսյանի, Գալուստ Գալոյանի, Ռիչարդ Հովհաննիսյանի գրախոսականները, որոնք բարձր են գնահատում լույս տեսած գիրքը, այն համարում գիտական լուրջ ներդրում արծարծված հիմնահարցի ուսումնասիրության գործում: Մասնավորապես ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանի կարծիքով՝ աշխատությունն ունի նյութն ընդհանրացնող և հարցը բազմակողմանիորեն լուսաբանող գիտական ուսումնասիրության բնույթ, հագեցած փաստական հարուստ նյութով: Թվարկելով գրքի մի շարք արժանիքներ՝ ակադեմիկոսը եզրակացնում է, որ այն գիտական լուրջ ուսումնասիրություն է (էջ 66-70):

Ակադեմիկոս Գ. Գալոյանի կարծիքով՝ մեր պատմագրության մեջ առաջին անգամ Ջ. Կիրակոսյանի գրքում են նկարագրված 1915 թ. Մեծ եղեռնի անցքերն իրենց բոլոր ահավոր մանրամասնություններով: Ըստ նրա՝ աշխատությունը լուրջ ներդրում է խորհրդահայ պատմագրության

մեջ, հայ ժողովրդի արևմտահայ հատվածի XX դարի պատմության ամբողջական մշակման մեծ գործի սկիզբն է (էջ 78-83):

Ջ. Կիրակոսյանի աշխատասիրությամբ 1972 թ. հրատարակվեց «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923 թթ.)» մեծարժեք ժողովածուն, որը նշանակալի իրադարձություն էր խորհրդահայ պատմագրության մեջ և լայն արձագանք ստացավ թե՛ մեզանում, թե՛ Սփյուռքում: Այն կազմել են Ջ. Կիրակոսյանը և Ռ. Սահակյանը: Վերջինս նաև ժողովածուի ծանոթագրությունների հեղինակն է:

Խնդրո առարկա գրքում որոշ նյութեր են զետեղվել հիշյալ ժողովածուի վերաբերյալ: Նախ տպագրվել է պրոֆեսոր Հայկ Ղազարյանի ընդարձակ գրախոսականը, որն այդ մեծարժեք ժողովածուի առաջին գնահատականն էր: Ըստ գրախոսի՝ ժողովածուն ունի գիտական և քաղաքական վիթխարի արժեք և առաջին փորձն է՝ լրացնելու խորհրդահայ պատմագրության մեջ գոյություն ունեցող բացը, իսկ Ջ. Կիրակոսյանի առաջաբանը նորդարյան հայ դիվանագիտության, Հայկական հարցի կեսդարյա պատմության մի ուրվագիծ է և լավագույն ուղեցույց՝ հրատարակվող վավերագրերը ճիշտ հասկանալու առումով:

Դրանից հետո եղան և՛ դրական, և՛ բացասական հրապարակումներ: Գրքում զետեղվել է «Սովետական Հայաստան» ամսագրի 1973 թ. մայիսի համարի խմբագրականը, որը ժողովածուն գնահատում է իբրև ուշագրավ երևույթ մեր փաստավավերագրական պատմագրության մեջ և ողջունում է հեղինակների քրտնաջան աշխատանքը:

Նողկանք է առաջացնում ոմն Սերգեյ Հակոբյանի նամակը ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար Անտոն Քոչինյանին, որտեղ հրապարակված փաստաթղթերը որակվում են իբրև իմպերիալիստական պետությունների ապոլոգիա: Նամակի վերջին տողերից հայտնի է դառնում, որ նրա հեղինակը պրոֆեսիոնալ «նամակ գրող» է և խորապես տգետ անձնավորություն (էջ 118):

Ռուսատյացության դիրքերից են արված սփյուռքահայ հեղինակ Հրանտ-Սամուելի մի քանի դիտողություններ ժողովածուի մասին:

Հակախորհրդային ցայտուն շեշտադրումներով է գրված «Ազատություն» ռադիոկայանի հայկական խմբագրության գլխավոր խմբագիր Լևոն Մկրտչյանի գրախոսությունը, որը տպագրվել է Բեյրութում հրատարակվող «Ազդակ շաբաթօրյակ» շաբաթաթերթում (1973 թ. նոյեմբերի 11-ին և 18-ին): Մատնանշելով մի շարք թերություններ՝ պայմանավորված խորհրդային գաղափարախոսական կաշկանդումներով, գրախոսն ամբողջության մեջ ժողովածուն գնահատում է իբրև եզակի երևույթ, օգտակար սկիզբ, որից հայ ընթերցողն անգտանելի տեղեկություններ կարող է քաղել իր ազգի պատմության հետ առնչվող դիվանագիտական իրողությունների մասին (էջ 124-129):

Քստմնելի է Հայաստանի ազգային արխիվում հայտնաբերված մի անստորագիր նամակ՝ հասցեագրված ԽՄՄԿ ԿԿ-ին առընթեր Կուսակցական վերահսկողության կոմիտեի նախագահին (17 ապրիլի 1974) և ՀԽՍՀ ՊԱԿ-ի նախագահին (22 ապրիլի 1974): Հեղինակը գրում է, թե Ջ. Կիրակոսյանի ժողովածուն ազգայնականություն է բորբոքում, պատճառ է դառնում երիտասարդության անփորձ մասի վարքագծի լուրջ խեղաթյուրումների, և որ այդ գիրքը քաղաքականապես անպատրաստ ընթերցողի մեջ սերմանում է դաշնակներին բնորոշ «ծովից ծով» Հայաստանի մասին երազանք: Գրքի հրատարակումը համարելով քաղաքական հանցագործություն՝ զրպարտիչը հովանավորության մեջ մեղադրում է

ՀԿԿ ԿԿ համապատասխան մարմիններին և անձամբ Կենտկոմի պրոպագանդայի գծով քարտուղարին, որոնք լռություն են պահպանում, և պահանջում է դատապարտել գրքի հրատարակումը:

ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Ստեփան Թովմասյանը 1974 թ. նոյեմբերի 6-ին ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանին և ՀԿԿ ԿԿ բյուրոյին է ներկայացնում մի ընդարձակ տեղեկանք ժողովածուի մասին, որը հայտնաբերվել է Ջ. Կիրակոսյանի անձնական արխիվում ու զետեղվել գրքում (էջ 135-144):

Տեղեկանքում ՀԿԿ Կենտկոմի քարտուղարը լրջագույն մեղադրանքներ է ներկայացնում ժողովածուն կազմողներին՝ անպատասխանատվություն, պրոֆեսիոնալիզմի, գիտական հասունության և բարեխղճության, գաղափարական կայունության և քաղաքական հեռատեսության պակաս, Դաշնակցության դասակարգային էության, Հայկական հարցում հայ բոլշևիկների դիրքորոշման անտեսում, Հայկական հարցում Ռուսաստանի և իմպերիալիստական պետությունների քաղաքականության նույնացում, ազգայնամոլություն և այլն: Գլխավոր մեղադրանքներից մեկն էլ դաշնակցական Լ. Մկրտչյանի վերը նշված դրական գրախոսականի հրապարակումն էր «Ազդակում»: Քարտուղարը աննպատակահարմար էր համարում Ջ. Կիրակոսյանի հետագա աշխատանքը ՀԿԿ Կենտկոմի բաժնի վարիչի պաշտոնում:

Ինչպես հիշյալ տեղեկանքի առիթով գրքի առաջաբանում նշում է Ա. Կիրակոսյանը, երկու տարի շարունակ Ջ. Կիրակոսյանի, նրա ընտանիքի և ընկերների շուրջ թանձրացել էր ահաբեկումների և հետապնդումների ծանր մթնոլորտ, որը, անկասկած, իր անդրադարձն ունեցավ նրա առողջության վրա: Ջ. Կիրակոսյանն ազատվեց Կենտկոմի բաժնի վարիչի պարտականություններից և նշանակվեց ՀԽՍՀ արտաքին գործերի նախարար: Զբաղեցրած պաշտոնից ազատվեց նաև Կենտկոմի վերոհիշյալ քարտուղարը: Մոսկվան այդպես էլ ժողովածուում ազգայնամոլության նշույլ չհայտնաբերեց:

Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի կուսկազմակերպության 1974 թ. նոյեմբերի 11-ի հաշվետու-ընտրական ժողովում պրոֆեսոր Խաչիկ Բաղալյանի ելույթում ներկայացված մեղադրանքը ժողովածուն կազմողների հասցեին առավել քան պարզունակ էր՝ այդ ի՞նչ եք գրել, որ Դաշնակցությունը Ձեզ գովում է: Վկայակոչելով Վ. Ի. Լենինին՝ հռետորը պահանջում էր դատի տալ և բանտ նստեցնել «Հայաստան» հրատարակչության քաղաքական գրականության բաժնի աշխատակիցներին, որոնք 50 մամուլ ծավալով ու 10 000 տպաքանակով տպագրել էին ժողովածուն (էջ 145-146):

1978-1983 թթ. լույս տեսան Ջ. Կիրակոսյանի երկու ծանրակշիռ աշխատությունները՝ «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը» և «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» խորագրերով, յուրաքանչյուրը՝ երկու գրքով: Դրանք հեղինակի ազգային ոգու պոռթկման նոր, հուժկու դրսևորումներ էին, որոնք վերստին բովանդակ աշխարհում ալեկոծեցին հայ հասարակական միտքը:

Գրախոսվող ժողովածուն բազմաթիվ նյութեր է պարունակում նաև այդ աշխատությունների վերաբերյալ: Վարդգես Համազասպյանը Ջ. Կիրակոսյանի նոր աշխատությունը գնահատում է իբրև նոր խոսք հայ դիվանագիտության պատմության մեջ (էջ 159-163):

Պրոֆեսոր Վալտեր Դիլոյանի կարծիքով՝ Ջ. Կիրակոսյանի մենագրությունը կարևոր ներդրում է Հայկական հարցի ծագման պատմության ուսումնասիրման բնագավառում:

Հուզիչ է ցմահ դատապարտված Գուրգեն Յանիկյանի նամակը Ջ. Կիրակոսյանին (էջ 169):

Պրոֆեսոր Վահան Բայբուրդյանի գնահատմամբ՝ մենագրության մեջ Հայկական հարցը քննվում է Ռուսաստանի, արևմտաեվրոպական տերությունների և Օսմանյան կայսրության դիվանագիտական փոխհարաբերությունների ֆոնի վրա, որը հնարավորություն է ընձեռում բացահայտելու Հայկական հարցի նկատմամբ բուրժուական դիվանագիտության վերաբերմունքի բազմաթիվ կողմեր (էջ 172-176):

Սփյուռքահայ հեղինակ Շահե Տատուրյանը նշում է, որ Ջ. Կիրակոսյանի «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը» աշխատությունը կարևոր նշանակություն ունի տարասփյուռ հայության անցյալի վրա լույս սփռելու, պատմության իրողությունները, նրա դասերը ճանաչելու առումով (էջ 177-181):

Պատմական գիտությունների դոկտոր Նորայր Սարուխանյանի կարծիքով՝ Ջ. Կիրակոսյանը վեր է հանել և լուսաբանել միջազգային իրադրության, Թուրքիայի ներքին և արտաքին կացության հանգուցային այն հիմնախնդիրները, այն հիմնական դեպքերի ընթացքն ու դեմքերի գործունեությունը, որոնք առավել առնչվել են արևմտահայերի քաղաքական ճակատագրին, Հայկական հարցի շուրջ ծավալված դիվանագիտական գործողություններին (էջ 182-185):

Սրտառուչ է Ջ. Կիրակոսյանի 50-ամյակի առթիվ Գևորգ Նախշքարյանի շնորհավորական ուղերձը (էջ 186):

Ռազմիկ Դավոյանը գրում է, թե պրոֆեսոր Ջ. Կիրակոսյանն իր բարձրարժեք հիմնավոր աշխատություններում անաչառ պատմաբանի խղճով ու խիզախ հետազոտողի անարգել համարձակությամբ հերքում է հայ ժողովրդի ցեղասպանությունը ժխտող փաստերը (էջ 192):

Սերո Խանզադյանը ամբողջ սրտով ողջունում է Ջ. Կիրակոսյանի գրքի ծնունդը՝ որակելով այն մեր պատմության դառը դասերի մեկնաբանության ձեռնարկ (էջ 202):

Մենագրությունը բարձր գնահատականների են արժանացրել սփյուռքահայ հեղինակներ Վահան Տոնապետյանը, Երվանդ Խաթանասյանը, Վրեժ-Արմենը: «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դ. 80-ական թթ.)» հատորի մասին բարձր կարծիք են հայտնել սփյուռքահայ հեղինակներ Խոսրով Թութունջյանը, Վաչե Բրուտյանը, Պեպո Սիմոնյանը:

Ա. Կիրակոսյանը հոր անձնական արխիվում գտել և հրապարակել է բազմաթիվ նամակներ, որոնք վերաբերում են «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» երկհատորյակին: Այդ բացառիկ հետաքրքրություն ներկայացնող գրքի վերաբերյալ ժողովածուում հրապարակվել են նաև մի շարք գրախոսականներ ու կարծիքներ: Հեղինակին նամակներ են հղել Ստեփան Ալաջաջյանը, Պերճ Զեյթունցյանը, Նուբար Չաքմաքչյանը, Էդուարդաս Մեժելայտիսը և ուրիշներ:

Գրախոսականներ են գրել Հովհաննես Ինճիկյանը, Յուրի Բարսեղովը, մանկավարժ Լևոն Սարգսյանը, Բագրատ Ուլուբաբյանը, Ռաֆֆի Կոնդակչյանը, լիբանանահայ գրող Պարույր Աղբաշյանը, պրոֆեսոր Վահան Բայբուրդյանը, Վալտեր Դիլոյանը:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում Կարեն Դեմիրճյանի գրառումները Ջ. Կիրակոսյանի հետ հանդիպումների մասին:

Սպիտակի շրջանի Լեռնանց գյուղի բնակիչ Սուրեն Ալեքսանյանը գրում է Ջ. Կիրակոսյանին. «Ձեր խոսքն Առաքելական է, անբիծ, Դուք զարթեցնում եք ազգի իղձերը,

հույսերը, մեզ տալիս եք հոգեկան բավարարություն, Դուք մարգարեական լույս ունեք, վայելում եք ազգի սերն ու աջակցությունը» (էջ 361):

Թուրքագետ Յուրի Պետրոսյանը նշում է, որ «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» գիրքը նշանակալի քայլ է հայ ժողովրդի պատմական ճակատագրի ուսումնասիրման ճանապարհին (էջ 369):

Ժողովածուի մի ստվար հատվածը Ջ. Կիրակոսյանի մահվան կապակցությամբ հրապարակված մահախոսականներ են: Հրապարակված են Կարլեն Դալլաքյանի, Հրաչյա Հովհաննիսյանի, Զորի Բալայանի, Ալիսիա Կիրակոսյանի, Ալեք Մանուկյանի, Գառնիկ Ադդարյանի, Յուրի Պետրոսյանի, Թորոս Թորանյանի, Արթուր Բեյլերյանի, Վահագն Դադրյանի, Հրանտ Գանգրունու, Հենրիկ Ազատյանի և այլոց հրաժեշտի խոսքերը:

Մի շարք գրախոսականներ նվիրված են Ջ. Կիրակոսյանի վերջին՝ հետմահու հրատարակված «Ա. Կ. Ջիվելեգովը և նրա պատմահրապարակախոսական ժառանգությունը» գրքին, որոնց հեղինակներն են Հրաչյա Հովհաննիսյանը, Մելիքսեթ Մելքոնյանը, Վահան Բայբուրդյանը, Ելենա Կարաբեգովան և ուրիշներ:

Վլադիմիր Պետրոսյանի «Մեծ հայը, գիտնականը, քաղաքացին» նյութը նվիրված է Ջ Կիրակոսյանի 65-ամյակին:

Տիգրան Լիլոյանի նյութը նվիրված է Ա. Կիրակոսյանի կազմած «Ջոն Սահակի Կիրակոսյան. մատենագիտություն» աշխատանքին:

Մի շարք նյութեր նվիրված են անվանի պատմաբանի ծննդյան հոբելյանական տարեդարձերին: Պատառիկներ կան նաև նրա մերձավորագույն ընկերների հուշագրություններից՝ որպես սրտի խորքերից բխող բնութագրումներ: Ջ. Կիրակոսյանի ողջ ստեղծագործությունը համարելով սըխրանք՝ Ալեքսան Կիրակոսյանը գրում է, որ նա գիգանտ էր, ժայռ էր, զանգված էր, որը երևան եկավ և շատ արագ անժամանակ հեռացավ, ցավոք սրտի և անհասկանալի ձևով, շատ անհասկանալի (էջ 611):

Սարգիս Խաչատրյանը գրում է, որ նա զորեղ էր ոչ միայն իր պարթև հասակով, այլև իր հզոր բանականությամբ և կենսասիրությամբ, իր անառարկելի հեղինակությամբ, բացի այդ՝ հիանալի դիվանագետ էր (էջ 612): Սեմյոն Հախումյանը նշում է, որ նա ահռելի կամքի ուժի տեր էր, անգնահատելի է նրա դերն ու նշանակությունը Ղարաբաղի հետ կապված հարցերում (էջ 615): Նիկոլայ Հովհաննիսյանի կարծիքով՝ Ջ. Կիրակոսյանի աշխատությունները կարևոր ներդրում են Հայաստանում միջազգային հարաբերությունների ուսումնասիրության գիտական ուղղության ձևավորման ու զարգացման մեջ (էջ 633):

Ֆադեյ Սարգսյանի գնահատմամբ՝ Ջոն Կիրակոսյանը ազգի ամենախոշոր գիտնականներից էր, երևույթ՝ մեր ազգի պատմության ասպարեզում: Նա հավերժ մնաց մեր ազգին նվիրված մեծ գիտնական (էջ 639-640):

Էդուարդ Մելքոնյանի վկայությամբ՝ «քաղաքի տղա» հասկացությունը Ջոն Կիրակոսյանի սիրած արտահայտություններից էր, որը նրա համար փիլիսոփայական ու մշակութաբանական մեծ իմաստ ուներ, ինքն էլ ապրում էր «քաղաքի տղայի» ոգևորությամբ ու հպարտությամբ (էջ 643):

Ժողովածուի ամփոփիչ խոսքը ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանինն է. նա Ջ. Կիրակոսյանին համարում է հայոց պատմագիտության մեջ քաղաքական հայագիտության հիմնադիրը, որի աշխատություններն արթնացնում էին հայ ժողովրդի ինքնագիտակցությունը, նպաստում նրա ինքնաճանաչմանը, ինքնությանը: Նրա գրքերն ուղղակի փոթորկեցին սփյուռքահայ հասարակական կյանքը: Ակադեմիկոսի

բնորոշմամբ՝ Ջ. Կիրակոսյանի ստեղծագործությունները հայրենասիրական ոգի ու շունչ հաղորդեցին այն երիտասարդությանը, որոնք աննկարագրելի դժվարին պայմաններում կարողացան հաղթանակով պսակել Արցախի ազատագրումը և կերտել հայոց անկախ պետականությունը (էջ 652-653):

Ժողովածուի վերջում զետեղված է Ջ. Կիրակոսյանի աշխատությունների ժամանակագրական ցանկը:

«Ջոն Կիրակոսյան. անկախ պետականության և քաղաքական հայագիտության ակունքներում» գիրքը, հիրավի, մի սքանչելի անձեռակերտ հուշակոթող է ժողովրդանվեր պատմաբանի հավերժ հիշատակին:

Պրոֆեսոր Կիրակոսյանի խմբագրությամբ հրատարակված փաստաթղթերի ժողովածուի, ինչպես նաև նրա մյուս աշխատությունների գլխով շատ հողմեր անցան: Բայց դրանք ոչ միայն չխունացան, չկորցրեցին իրենց գիտական արժեքը, այլև ընդհակառակը՝ դիմացան ժամանակի բոլոր փորձություններին և առ այսօր շարունակում են մնալ հայոց նոր և նորագույն պատմության, XIX-XX դդ. հայ դիվանագիտության պատմության ուսումնասիրման կարևորագույն աղբյուր, կոթողային անփոխարինելի գանձարան:

Ջ. Կիրակոսյանի հիշատակը հավերժացնելուց զատ՝ գիտագործնական կարևորագույն նշանակություն ունի նաև Ա. Կիրակոսյանի հրատարակած ժողովածուն, որը կյանքից անժամանակ հեռացած գիտնականի աշխատությունների բազմակողմանի պատմաքննական վերլուծությունն է, ուստի յուրատեսակ ուղեցույց է վերոհիշյալ հիմնախնդիրների ուսումնասիրման, հայ դիվանագիտության հետագա առաջընթացի ուղիներ որոնելու ճանապարհին:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Մ. Ս.
Պատմական գիտությունների դոկտոր